

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԲԱԺԻՆԸ ՀԱՄԱԼԲԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ  
ԱՆՑԿԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՀԱՎԱՔԱԾ  
ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ**

	<b>Ազգանուն, անուն, հայրանուն</b>	<b>Ընդհանուր</b>
1.	Դունամայան Ազատ Հրաչյայի	81
2.	Գալստյան Նոնա Հմայակի	72
3.	Հարությունյան Գոռ Վահեի	72
4.	Մինասյան Գոռ Գառնիկի	69
5.	Ուլիխանյան Սյուզաննա Սուրենի	69
6.	Արսլան Սիմա Լևոնի	61
7.	Ներսիսյան Լիանա Վլադիկի	57
8.	Նիկողոսյան Շուշանիկ Դերենիկի	53
9.	Սարոյան Արման Սամվելի	45

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ  
ՔՐԵԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԲԱԺԻՆԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ  
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ  
ԱՍԵՆԱԲԱՐՉՐ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՀԱՎԱՔԱԾ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ  
ՑՈՒՑԱԿԸ**

	<b>Ազգանուն, անուն, հայրանուն</b>	<b>Ընդհանուր</b>
1.	Հովհաննիսյան Արմեն Արտաշեսի	99
2.	Կարապետյան Էդգար Ռուբիկի	85
3.	Հակոբյան Միեր Արարատի	82.5
4.	Շահվերդյան Մանվել Սամվելի	77.5
5.	Գասպարյան Գնել Գեղամի	71.5
6.	Մեխակյան Հրաչյա Գագիկի	62.5
7.	Սարգսյան Տիգրան Աշոտի	61
8.	Դուկեյան Դիանա Աշոտի	60
9.	Սարուխանյան Ռուդիկ Ռուբիկի	60
10.	Փարսադանյան Հովհաննես Կարենի	58.5

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ արդարադատության խորհրդի աշխատակազմը հրապարակում է դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման գրավոր քննության արդյունքներով ամենաբարձր հանրագումարային միավորներ հավաքած հավակնորդների ցուցակը և կենսագրական տվյալները

### ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՄՆԱԳԻՏԱՑՈՒՄ.

#### **Դուռնամայան Ազատ Հրաչյայի**

Ծնվել է 08.09.1987թ. Երևան քաղաքում: 2008-2010թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: 2009թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, 2014թ.՝ մագիստրատուրան: 09.11.2012-13.01.2014թթ. աշխատել է «Նորվիկ» ՈՒՎԿ ՓԲԸ-ում՝ որպես իրավաբան: 13.01.2014թ.-ից առ այսօր աշխատում է «Արդշինբանկ» ՓԲԸ-ում, նախ՝ որպես իրավախորհրդատու, ապա՝ ավագ իրավախորհրդատու: 30.04.2016թ. ստացել է փաստաբանական գործունեության արտոնագիր: Ամուսնացած է:

#### **Գալստյան Նոնա Հմայակի**

Ծնվել է 01.07.1984թ. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում: 2005թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, 2007թ.՝ մագիստրատուրան: 21.11.2005-01.05.2009թթ. աշխատել է ՀՀ ԱՆ «Պրոֆեսոր Ռ. Հ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ում՝ որպես իրավախորհրդատու: 2008թ.-ից առ այսօր հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ: 01.09.2009-10.11.2011թթ. աշխատել է «Մալա Իմպուլս» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան: 01.02.2012-01.04.2014թթ. աշխատել է «Թուֆենկյան բարեգործական հիմնադրամի» «Կանանց աջակցման կենտրոն» ծրագրում՝ որպես իրավաբան: 01.12.2013թ.-ից առ այսօր աշխատում է «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ում՝ որպես իրավաբան: Ամուսնացած է, ունի երկու երեխա:

#### **Հարությունյան Գոռ Վահեի**

Ծնվել է 27.04.1987թ. Երևան քաղաքում: 2008թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը: 2008-2010թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: 24.03.2011-17.02.2016թթ. աշխատել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական: 17.02.2016-25.04.2016թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և

Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական: 02.05.2016թ.-ից առ այսօր աշխատում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ: 30.04.2016թ. ստացել է փաստաբանական գործունեության արտոնագիր: Ամուսնացած է:

### **Մինասյան Գոռ Գառնիկի**

Ծնվել է 29.05.1984թ. Երևան քաղաքում: 2004թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի բակալավրիատը, 2006թ.՝ մագիստրատուրան: 2008թ. ավարտել է Երևանի տնտեսաիրավագիտական համալսարանը՝ իրավագիտության մասնագիտությամբ: 03.06.2002-01.02.2005թթ. աշխատել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանում՝ որպես արխիվապահ: 05.05.2006-01.02.2007թթ. աշխատել է «Էներջի կոմպլեքս» ՍՊԸ-ում՝ որպես տնօրեն, իսկ 12.05.2006-01.02.2007թթ. «Դենի-Ջորջի» ՍՊԸ-ում՝ որպես տնօրեն: 05.06.2007-02.03.2009թթ. աշխատել է ՀՀ դատական ղեկարտամենտի միջազգային համագործակցության, արարողակարգի և տեղեկատվության վարչությունում՝ որպես միջազգային համագործակցության հարցերով մասնագետ: 02.03.2009-01.07.2013թթ. աշխատել է ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի օգնական: 01.07.2013-06.08.2013թթ. աշխատել է ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի ավագ օգնական: 06.08.2013-14.06.2016թթ. աշխատել է ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի ավագ օգնական: 14.06.2016թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի ավագ օգնական: 29.01.2013թ. ստացել է փաստաբանական գործունեության արտոնագիր: Ամուսնացած է, ունի մեկ երեխա:

### **Ուլիխանյան Սյուզաննա Մուրեցի**

Ծնվել է 13.12.1988թ. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում: 2009թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2011թ.՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրան՝ հանրային կառավարչի մասնագիտությամբ: 01.09.2011-03.11.2014թթ. աշխատել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական: 01.11.2014թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի օգնական: Ամուսնացած է, ունի մեկ երեխա:

## **Արովյան Սիմա Լևոնի**

Ծնվել է 17.06.1983թ. Երևան քաղաքում: 2005թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի «Գալիք» համալսարանի իրավագիտության ֆակուլտետը, 2009թ.՝ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրան՝ իրավագիտություն մասնագիտությամբ (գերազանցությամբ): 10.03.2008-22.10.2009թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնականի ժամանակավոր պաշտոնակատար: 04.11.2009-01.11.2011թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնականի ժամանակավոր պաշտոնակատար: 09.01.2012-03.05.2012թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնականի ժամանակավոր պաշտոնակատար: 12.09.2012-26.10.2012թթ. աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական: 16.10.2010թ. ստացել է փաստաբանական գործունեության արտոնագիր: 01.11.2012-31.05.2013թթ. աշխատել է «Իրավական եռանկյունի» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան: 07.06.2013թ.-ից առ այսօր աշխատում է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական: Ամուսնալուծված է, ունի երկու երեխա:

## **Ներսիսյան Լիանա Վլադիկի**

Ծնվել է 26.11.1978թ. Երևան քաղաքում: 1999թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 12.11.1999-30.10.2001թթ. ծառայել է ՀՀ ներքին գործերի նախարարության համակարգում: 05.11.2007-16.11.2011թթ. աշխատել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատական նիստերի քարտուղար: 16.11.2011թ.-ից առ այսօր աշխատում է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական: Ամուսնացած է, ունի երկու երեխա:

## **Նիկողոսյան Շուշանիկ Դերենիկի**

Ծնվել է 11.06.1972թ. Երևան քաղաքում: 1998թ. ավարտել է Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարանը՝ իրավագիտություն մասնագիտությամբ: 31.10.1989-27.12.1998թթ. աշխատել է «Զորադրյուր» արտադրական կոոպերատիվում՝ որպես բանվոր: 29.09.1999-01.06.2011թթ. աշխատել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

01.09.2011-15.03.2013թթ. աշխատել է «ԷՄ ՋԻ ԷՆ ՎԻ լոյերս գրուպ» ՍՊԸ-ում՝ որպես փաստաբան: 18.03.2013-02.06.2014թթ. և 09.03.2015-31.08.2015թթ. աշխատել է «Սլասար» ՍՊԸ-ում՝ որպես փաստաբան: 01.07.2016-25.04.2017թթ. աշխատել է «ՅՈՒՐԷԿՍ» ՍՊԸ-ում՝ որպես փաստաբան: 04.05.2017թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի օգնականի ժամանակավոր պաշտոնակատար: 10.06.2011թ. ստացել է փաստաբանական գործունեության արտոնագիր: Ամուսնացած չէ:

### **Սարոյան Արման Սամվելի**

Ծնվել է 25.05.1986թ. ՀՀ Շիրակի մարզի Անուշավան գյուղում: 2004-2006թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: 2009թ. ավարտել է Երևանի «Գլաճոր» համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, 2012թ.՝ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրան՝ իրավագիտության մասնագիտությամբ: 18.11.2009-28.12.2012թթ. աշխատել է «Էկո-Ռեսուրս» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան: 01.04.2013-31.05.2013թթ. աշխատել է «Ռոյալ Ֆեմիլի քրեյդ» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան: 11.06.2013-20.03.2014թթ. աշխատել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական: 20.03.2014-05.10.2015թթ. աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչությունում՝ որպես ավագ մասնագետ: 05.10.2015թ. տեղափոխման կարգով նշանակվել և առ այսօր աշխատում է ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման և վիճակագրության վարչությունում՝ որպես դատական պրակտիկայի ամփոփման բաժնի ավագ մասնագետ: Ամուսնացած չէ:

## **Քրեական մասնագիտացում.**

### **Հովհաննիսյան Արմեն Արտաշեսի**

Ծնվել է 04.01.1989թ. Երևան քաղաքում: 2009թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը (զերագանցությամբ), 2011թ.` մագիստրատուրան (զերագանցությամբ): 2014թ. ավարտել է Եվրոպական կրթական և տարածաշրջանային ակադեմիայի ասպիրանտուրան: 2014թ. ստացել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 15.10.2010-03.11.2014թթ. աշխատել է ՀՀ կառավարության աշխատակազմի իրավաբանական վարչությունում, նախ` որպես փորձագետ, ապա` առաջատար մասնագետ, այնուհետև` գլխավոր մասնագետ: 03.11.2014թ.-ից առ այսօր աշխատում է որպես ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական: 2015թ.-ից առ այսօր դասավանդում է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում` որպես քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դասախոս: Ամուսնացած է, ունի մեկ երեխա:

### **Կարապետյան Էդգար Ռուբիկի**

Ծնվել է 10.02.1987թ. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքում: 2008թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, 2012թ.` Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի մագիստրատուրան, 2015թ.` Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան: 2007-2009թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: 01.07.2009-03.11.2011թթ. և 01.03.2012-29.04.2013թթ. աշխատել է «Եղվարդ արտադրական բազա» ՍՊԸ-ում` որպես իրավաբան: 07.05.2013թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում` որպես դատավորի օգնական: Ամուսնացած չէ:

### **Հակոբյան Մհեր Արարատի**

Ծնվել է 12.02.1988թ. Երևան քաղաքում: 2008թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, 2010թ.` մագիստրատուրան: 2013թ.` Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի ասպիրանտուրան: 2014թ. ստացել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2015թ. ուսանել է ԱՄՆ Թավթսի համալսարանի Ֆլեթչերի իրավունքի և դիվանագիտության դպրոցում: 01.11.2008-14.04.2009թթ. աշխատել է «Միմ-Թեքնոլոջի» ՍՊԸ-ում` որպես իրավաբան: 18.04.2009-01.01.2010թթ. աշխատել է ՀՀ վճռաբեկ դատարանի

աշխատակազմի իրավական փորձաքննությունների վարչությունում՝ որպես կրտսեր մասնագետ: 01.01.2010-15.10.2010թթ. աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի կազմակերպահրավական վարչությունում՝ որպես կրտսեր մասնագետ: Համատեղությամբ աշխատել է Լորիս Քալաշյանի անվան Հայկական բաց համալսարանում, ինչպես նաև «ՀՀ դատական դպրոց» ՊՈԱԿ-ում՝ որպես դասախոս: 18.11.2011-08.01.2014թթ. աշխատել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական: 17.01.2014-01.06.2016թթ. աշխատել է ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման և եվրաինտեգրման բաժնի դատախազ: 01.06.2016-21.07.2016թթ. աշխատել է ՀՀ գլխավոր դատախազության միջազգային համագործակցության և իրավական ապահովման վարչության դատախազ: 18.10.2016թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությունում՝ որպես պետի տեղակալ: Ամուսնացած չէ:

### **Շահվերդյան Մանվել Սամվելի**

Ծնվել է 08.11.1979թ. ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքում: 1997-1999թթ. ծառայել է ԼՂՀ Մարտունու շրջանի զորամասում՝ որպես հրետանային դիվիզիոնի հրանոթի հրամանատար: 2002թ. ավարտել է Երևանի «Հայբուսակ» ինստիտուտի տնտեսա-իրավագիտական ֆակուլտետը՝ ստանալով տնտեսագետ-իրավագետի որակավորում: 2007թ. ավարտել է ՀՀ պետական կառավարման ակադեմիան՝ պետական կառավարում և տեղական ինքնակառավարում մասնագիտությամբ: 2009թ. ավարտել է Հյուսիսային համալսարանը՝ իրավագիտություն մասնագիտությամբ: 02.09.2002-28.08.2003թթ. Երևան քաղաքի թիվ 85 միջնակարգ դպրոցում դասավանդել է «Պետության և իրավունքի հիմունքներ» առարկան: 01.10.2003-20.03.2014թթ. աշխատել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական: 20.03.2014-05.10.2015թթ. աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչությունում՝ որպես ավագ մասնագետ: 05.10.2015թ. տեղափոխման կարգով նշանակվել և առ այսօր աշխատում է ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման և վիճակագրության վարչությունում՝ որպես դատական պրակտիկայի ամփոփման բաժնի ավագ մասնագետ: Ամուսնացած է, ունի երեք երեխա:

### **Գասպարյան Գնել Գեղամի**

Ծնվել է 20.06.1989թ. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում: 2010թ. ավարտել է Գավառի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը,



2013թ.՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրան՝ հոգեբանություն (կառավարման հոգեբանություն) մասնագիտությամբ: 2017թ.-ից հանդիսանում է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հայցորդ: 2012 թվականին ծառայել է ՀՀ զինված ուժերում: 16.01.2014-16.03.2015թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ: 16.03.2015թ.-ից առ այսօր աշխատում է Երևանի կայազորի զինվորական դատախազության դատախազ: Ամուսնացած է, ունի երկու երեխա:

### **Մեխակյան Հրաչյա Գագիկի**

Ծնվել է 22.05.1988թ. Երևան քաղաքում: 2009 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը: 2009-2011թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: 06.09.2011-20.06.2013թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնում՝ որպես հետաքննիչ: 19.11.2013-05.10.2015թթ. աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչությունում՝ որպես կրտսեր մասնագետ: 05.10.2015թ. տեղափոխման կարգով նշանակվել և մինչ օրս աշխատում է ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման և վիճակագրության վարչության դատական պրակտիկայի ամփոփման բաժնում՝ որպես կրտսեր մասնագետ: Ամուսնացած է, ունի երկու երեխա:

### **Սարգսյան Տիգրան Աշոտի**

Ծնվել է 06.10.1983թ. Երևան քաղաքում: 2005թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, 2007թ.՝ մագիստրատուրան, իսկ 2009թ.՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրան՝ հանրային կառավարում մասնագիտությամբ: 22.11.2008-05.12.2008թթ. վերապատրաստվել է Կահիրեի պետական համալսարանում: 2009 թվականի հոկտեմբերին վերապատրաստվել է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտում: 03.11.2005-06.11.2006թթ. աշխատել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության փաստաթղթերի տեսչության բաժնում՝ որպես առաջին կարգի մասնագետ: 06.11.2006-15.02.2008թթ. աշխատել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության փաստաթղթերի տեսչության բաժնում՝ որպես առաջատար մասնագետ: 13.02.2008-28.06.2012թթ. աշխատել է ՀՀ կառավարության աշխատակազմի Ազգային ժողովի հետ կապերի վարչությունում՝ որպես առաջատար մասնագետ: 28.06.2012-14.07.2012թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի

կառավարման վարչության աշխատակազմի իրավաբանական վարչության հայցապահանջների և իրավական ակտերի բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ: 12.07.2012-25.07.2012թթ. աշխատել է ՀՀ դատախազությունում՝ որպես ՀՀ Տավուշի մարզի դատախազության դատախազ: 24.09.2012-12.11.2012թթ. աշխատել է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության վարչական վարույթի բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ: 23.11.2012-14.02.2013թթ. աշխատել է Եվրասիա միջազգային համալսարանում՝ որպես իրավախորհրդատու: 2012-2013թթ. իրավագիտություն է դասավանդել Անվտանգության միջազգային հատուկ ակադեմիայում: 20.02.2013-15.11.2013թթ. աշխատել է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի իրավաբանական և գործերի կառավարման բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ: 15.11.2013-30.12.2015թթ. աշխատել է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի իրավաբանական և գործերի կառավարման բաժնում՝ որպես բաժնի պետ: 28.11.2015թ. ստացել է փաստաբանական գործունեության արտոնագիր: 08.01.2016-30.12.2016թթ. աշխատել է ՀՀ փաստաբանների պալատի Հանրային պաշտպանի գրասենյակում՝ որպես հանրային պաշտպան: 30.12.2016-12.01.2017թթ. աշխատել է «Նաիրի Ինչուրանս» ԱՍՊԸ-ում՝ որպես իրավաբան: Ներկայումս զբաղվում է փաստաբանական գործունեությամբ: Ամուսնացած է, ունի մեկ երեխա:

### **Գույեյան Դիանա Աշոտի**

Ծնվել է 05.01.1986թ. Երևան քաղաքում: 2006 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, 2008թ.՝ մագիստրատուրան: 2017թ. հունվար-հուլիս ամիսներին ուսանել է ԱՄՆ Թավթսի համալսարանի Ֆլեթչերի իրավունքի և դիվանագիտության դպրոցում: 2009թ. ընդունվել է ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտուրա՝ միջազգային իրավունք մասնագիտացմամբ: 05.03.2009-17.03.2011թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության քրեական և վարչական գործերով բաժնում՝ որպես առաջին կարգի մասնագետ: 17.03.2011-15.01.2014թթ.՝ աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության քաղաքացիական և տնտեսական գործերով բաժնում՝ որպես առաջատար մասնագետ: 15.01.2014-08.07.2014թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության քրեական և վարչական գործերով բաժնում՝ որպես գլխավոր

մասնագետ: 08.07.2014թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմում՝ որպես մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության քրեական և վարչական գործերով բաժնի պետ: 2015 թվականից դասավանդում է ՀՀ արդարադատության ակադեմիայում: 2016 թվականից դասավանդում է ՀՀ արդարադատության ինստիտուտում: Ամուսնացած է, ունի մեկ երեխա:

### **Սարուխանյան Ռուդիկ Ռուբիկի**

Ծնվել է 04.08.1963թ. Լենինական քաղաքում: 1985 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ցերեկային բաժինը: 02.07.1985-07.05.1989թթ. աշխատել է Ախուրյանի շրջխորհրդի գործկոմի գյուղվարչությունում՝ որպես միջոցառեսային ավագ իրավախորհրդատու: 12.05.1989-25.05.1990թթ. աշխատել է «Հայուրալսիբշին» միավորման մատակարարման վարչությունում՝ որպես առաջին կարգի իրավախորհրդատու: 25.05.1990-19.12.1991թթ. աշխատել է Շիրակի շրջխորհրդի գործկոմում՝ որպես իրավախորհրդատու: 19.12.1991-12.01.1999թթ. աշխատել է Գյումրի քաղաքի տրանսպորտային դատախազությունում՝ որպես քննիչ: 12.01.1999-07.06.2005թթ. աշխատել է Շիրակի մարզի դատախազությունում, նախ՝ որպես քննիչ, ապա՝ ավագ քննիչ: 07.06.2005-26.11.2007թթ. աշխատել է Շիրակի մարզի դատախազի օգնական: 26.11.2007-11.11.2013թթ. աշխատել է Շիրակի մարզի դատախազությունում՝ որպես ավագ դատախազ: 01.04.2015թ.-ից առ այսօր աշխատում է «Կումայրի 97» ՍՊԸ-ում՝ որպես իրավախորհրդատու: Ամուսնացած է, ունի երեք երեխա:

### **Փարսադանյան Հովհաննես Կարենի**

Ծնվել է 05.08.1985թ. ՀՀ Տավուշի մարզի Սևքար գյուղում: 2008թ. ավարտել է ՀՀ ոստիկանության ակադեմիան՝ իրավագիտություն մասնագիտությամբ: 13.08.2008-23.03.2013թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնում՝ նախ որպես քննիչ, ապա՝ ավագ քննիչ: 28.11.2013-14.08.2014թթ. աշխատել է որպես ՀՀ Շիրակի մարզի դատախազության դատախազ: 14.08.2014-24.03.2017թթ. աշխատել է որպես ՀՀ Տավուշի մարզի դատախազության դատախազ: Ամուսնացած է, ունի 3 երեխա: